Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 492 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՀԻԴՐԱՎԼԻԿ ՍԵՂԱՆՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը վիրահատական էլեկտրոհիդրավլիկ թվով 3 հատ սեղանի նվիրաբերում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, 0061, Հրանտ Վարդանյան 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան 0061, Հրանտ Վարդանյան 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (ՀՀ, քաղ. Երևան 0056, Նոր Նորքի 3-րդ զանգված, Գյուրջյան փող., 10 շենք): 2. Բնագավառը՝ առողջապահական:
6.	Ծրագրի բյուջեն	20,515 (քսան հազար հինգ հարյուր տասնհինգ) ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (ՀՀ, քաղ. Երևան 0056, Նոր Նորքի 3-րդ զանգված, Գյուրջյան փող., 10 շենք): Ընտրությունը կատարվել է համաձայն բարեգործությունը ստացողի աջակցության խնդրանքի:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հուլիսի 15-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Վիրահատական միջամտություններ կատարելու համար նախատեսվում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը նվիրաբերել թվով 3 հատ վիրահատական Techartmed ET700 էլեկտրոհիդրավլիկ սեղան (20,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 415 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ): 2. Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հուլիսի 15-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է թվով 3 հատ վիրահա–տական Techartmed ET700 էլեկտրոհիդրավլիկ սեղանի ձեռքբերում և ներմուծում (20,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխա-դրման ծախսերը կազմում են 415 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրակա-նացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից; 2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը

		բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ